(արձ. 1, 45, 46, 47 և այլն), եկեղեցի (47)։ Նույնիսկ Ոսկեբերանը՝ ոսկէբէրան (125)։ Ետու, ետուն բառերը երբեմն գրված են էտու, էտուն (6, 15, 34, 46, 48, 50, 53 և այլն)։ Եկի վանքս գրված է էկի վանքս (47)։

12—13-րդ դարերում յ կիսաձայնը բառերի վերջին չի արտասանվել, դրանով է բացատրվում այն երևույթը, որ բառերի վերջին յ գիրը մեծ մասամբ չի գրված արձանագրությունների մեջ։ Իմ (արձ. 10, 28) իւրո (2, 13), Սրբո (10), Որդո (1, 13), սատանա (44, 127), խափանելո (10), Մխիթարա (10), Գեորգեա (12) և այլն։ Նկատելի է, որ յ կիսաձայնը չի արտասանվել որոշ բառերի մեջ ևս։ Դրանով է բացատրվում, որ Հայոց գրված է հաոց (4), արքային՝ արքաին (28, 29, 30), զայս՝ զաս (29) և այլն։

 Օ փոխառյալ գիրը գործածություն չունի նույնիսկ 14 և 15-րդ դարերի արձանագրությունների մեջ։ Ամենուրեք տօն, օր, օրհնին բառերը գրված են տաւն, աւր, աւրհնին։ Օ գիրն առաջին անգամ գործածվել է 1520 թվականին այն էլ միայն Սօլաղա անձնանվան մեջ։ Հետաքրքիր է, որ գրաբար նոցա (նրանց) բառը մի քանի տեղերում գրված է նացա ձևով (նացա ժամն, նացա անուն, նացա այլ գրին, (13, 46)։ Պարզ է, որ դա գրչասխալի արդյունք չի կարող լինել, այլապես միայն մի անգամ գրված կլիներ սխալ ձևով։

Արձանագրությունների մեջ շատ կան բարբառային ոճեր և արտահայտություններ։ Օրինակ. աւագ զատկին զվարդապետներն ի քաշ են արարել (47), զիս սաքղամիշ արար (47), տվի վախմ Սամծէրու Բ (2) էզին իր ընձ(ան)-ովն (62), յետոյ նորոգեցի զչաղացն (101), գնեցի զԱտոմին էզին... և տվի հիւրատունն (128), որ ի Տուրքեն ի գնելու այն շամ իմ հէրէնի էգոյն, որ ի լանջին (133), էտու Աստուածածնի ձորին այգին եւ զտներն և զայն հողն, որի վերի դեհին է (174) և այլն։

Այս և բազմաթիվ այլ բառեր և արտահայտություններ կարող են ծառայել իբրև նյութ միջին հայերենի և տեղական բարբառների ուսումնասիրության համար։

* * *

Սանահնի արձանագրությունները հարուստ նյութ են տալիս մի քանի իշխանական տոհմերի պատմության համար, որոնք մեր ժողովրդի պատմության մեջ կարևոր դեր են խաղացել։ Բազմաթիվ արձանագրություններ վերաբերում են Կյուրիկյան թագավորներին, Զաքարյան տոհմին, Համազասպյանց, Վաչուտյանց տներին և այլն։ Սակայն, ելնելով մեր աշխատանքի բնույթից, այդ և բազմաթիվ այլ հարցերի վրա այստեղ կանգ չենք առնի։